



**ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ
ՍՓՐԻՆԿՖԻԼՏԻ ՄԱՍՍԱԶՈՒՍԵՑԻ ՀԱՅՈՑ «ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍ»
ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ**

ՍՓՐԻՆԿՖԻԼՏԻ ՄԱՍՍԱԶՈՒՍԵՑԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍՈՒՆ, ԾԵԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ
ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՍՓՐԻՆԿՖԻԼՏ

Աստուծոյ ողորմութեամբ Միացեալ Նահանգաց քրիստոսասէր հոգի վրայ, մեր հաւատացեալ ժողովուրդը, հաւատարիմ իր նախնեաց լոյս հաւատքին, ջէն ու պայծառ կը պահէ իր աղօթքի Տուները, որոնց խորաններէն մշտապէս Սուրբ Հոգւոյ կենարար շնորհները կը բաշխուին բոլոր աղօթողներուն և յուսացեալ սրտերուն:


Ձեր բարեխնամ՝ առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի 24 Մարտ 1983 թուակիր նամակէն ուրախութեամբ տեղեկացանք, թէ աստուածահաճոյ եռանդով լեցուած, յաջողած էք կառուցել «ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍ» ձեր եկեղեցին և այժմ կը պատրաստուիք սրբալոյս միւռնոսով օծումը կատարել յառաջիկայ Մայիս ամսուայ վերջերուն:

Այս երջանիկ առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն ձեպի բոլորիդ կը յղենք Մեր հայրական օրհնութիւնը և Մեր սրտաբուխ ջերմ մաղթանքները, որ ձեր նորակառոյց եկեղեցին մնայ անսասան և միշտ պայծառ իբրև ձեր կեանքի հոգևոր մխիթարութեան և լուսատրութեան տաճար:

Մեր օրհնութիւնը նաև նորակառոյց եկեղեցւոյ հիմնադիրներուն, բարերարներուն և շինութեան յանձնաժողովի անդամներուն:

Թող Տէր ձեզ բոլորդ պահէ պահպանէ խաղաղ ու քաջառողջ արևոտ անհատնում օրեր և մնայ միշտ ամենուդ պահապան:

Արդ, սիրելիներ մեր, «հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, պօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով լինիցի» (Ա Կորնթ. ԺԶ 14—15): Ամէն:



ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20 Ապրիլի
1983 Փրկչական ամի,
եւ ի տոմարիս Հայոց ՌՆԼԲ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1189

